ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1950 Общественные науки

ԴՐԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ»[1]

Հայրենական մեծ պատերազմի հերոսները իրենց կատարած սխրագործություններով հավերժացրել են մեր հայրենիքի փառքն ու անպարտելիությունը։ Դրա համար էլ նրանց կյանքն ու գործունեությունը պետք է ամենալուրջ կերպով ուսումնասիրվի և սովետական ժողովրդի սեփականությունը դարձվի։

Թվում է թե հենց այդ նպատակն է հետապնդել ընկ. Արմո Մալխասյանը կազմելով «Հայ գեներալներ և Սովետական Միության Հերոսներ» ալբոմը։ Հեղինակի նպատակն է եղել սովետական հասարակությանը ծանոթացնել Հայրենական Մեծ պատերազմում աչքի ընկած հայ գեներալների և Սովետական Միության Հերոսների մարտական գործունեության հետ, այն խիզախ մարտիկների ու հրամանատարների, որոնք ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ, ՍՍՌՄ բազմազգ ժողովուրդների զավակների հետ կողք-կողքի կռվում էին գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ, հանուն սովետական հայրենիքի ազատության և անկախության։

Ընկ. Մալխասյանը բավական աշխատանք է կատարել ալբոմի պատրաստման համար, սակայն նա չի կարողացել իր հավաքած հարուստ նյութն օգտագործել գիտական բարեխղճությամբ։ Աշխատությունը լի է փաստական կարգի սխալներով, հակասություններով, աղավաղումներով։

Այսպես, օրինակ, հեղինակը ալբոմի 42-րդ էջում Սովետական Միության Հերոս, Գվարդիայի գնդապետ Լևոն Հովհաննեսի Դարբինյանի մասին գրում է.

«Լևոն Հովհաննեսի Դարբինյանը ծնվել է 1903 թ., Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղում, չքավոր ընտանիքում։ Հարկադրված լինելով թողնել դպրոցը, նա սկսում է բատրակություն, ապա և հովվություն անել գյուղում... 1922 թ. նա արդեն ԼԿԵՄ Բոգդանովկայի Շրջկոմի քարտուղարն է։ 1924 թ. նա կամավոր կիրպով ընդունվում է Թբիլիսիի ռազմական դպրոցը, որն ավարտում է 1928 թվին։

Լևոն Դարբինյանը ջոկի հրամանատարի աստիճանից աճում է ու դառնում դիվիզիայի հրամանատար։ Նա 12 տարի ծառայել է Վորոշիլովի անվան Հայկական դիվիզիայում»։

Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի Հայրենական պատերազմի Պատմության Կաբինետում Սովետական Միության Հերոս Լևոն Դարբինյանի անձնական գործը (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 29), ցույց է տալիս, որ Լևոն Դարբինյանը ծնվել է 1905 թվին (և ոչ թե 1903 թ.), նրա հոր անունը Խնկիանոս է (և ոչ Հովհաննես), նա գյուղում հովվություն, ապա բատրակություն չի արել, եղել է Բորժոմի, Ախալքալաքի, ապա Ալեքսանդրի (այժմ Լենինական) որբանոցներում, հետո բարհատ բանվոր ճանապարհների վրա։

1922 թ. Լևոն Դարբինյանը Բոգդանովկայի Շրջկոմի քարտուղար չի եղել։

Հեղինակը գրում է, որ Դարբինյանը 12 տարի ծառայել է Վորոշիլովի անվան Հայկական դիվիզիայում, մինչդեռ նա այդ դիվիզիայում երբեք չի ծառայել։

Նույն էջում մենք կարդում ենք. «Նրա քաջարի դիվիզիան մի թռիչքով անցավ գետի ափը։ Գրավված այդ պլացդարմի համար մղված կատաղի կռիվներից մեկի ժամանակ Լևոնն ընկավ հերոսի մահով»։ Մինչդեռ մեզ հայտնի է, որ 1943 թ. դեկտեմբերի 25-ին № վայրի գրավման մարտերում ծանր վիրավորվեց (տես նրա պարգևաթերթիկը, ՀՊՊ Կաբինետ, գործ № 29), իսկ դեկտեմբերի 28-ին վախճանվեց Կորոստիշևում։

Հեղինակը Ալբոմի 18-րդ էջում գրում է. «Գվարդիայի գեներալ մայոր Սերգեյ Իսայի Կարապետյանը...միջնակարգ կրթություն ստացել է Աշխարհում։ 1916 թվին կանչվելով բանակ, սովորել և ավարտել է Մոսկվայի Ռազմական դպրոցը... Կարապետյանը գալիս է Հայաստան և ակտիվ մասնակցություն ունենում երկրի սովետացմանը։ ...Կարապետյանը սովորել է նաև Կ. քաղաքի Հեծելազորային Ռազմական դպրոցում»։ Վերև նշված փաստերից և ոչ մեկը իրականությանը չի համապատասխա-

---

[1] *Հայ գեներալներ և Սովետական Միության Հերոսներ։ Ալբոմ։ Կազմեց Արմո Մալխասյան։ Հայպետհրատ, 1947 թ., Երևան։*

նում։ Իրականն այն է, որ ընկ. Սերգեյ Կարապետյանը 13 տարեկան հասակում գնացել է Մոսկվա, սովորել է Մոսկվայի Առևտրական դպրոցում (և ոչ թե Աշխաբադում, ինչպես գրում է հեղինակը), ապա 1918 թ. սեպտեմբերին կամավոր կերպով մտել է Կարմիր Բանակի շարքերը Մոսկվայում (և ոչ թե 1916 թ.), 1919 թ. քաղաքացիական կռիվներին մասնակցել է Արևելյան ռազմաճակատում Կոլչակի դեմ։ 1920 թվականին նրան գործուղել են սովորելու Օ. քաղաքի ռազմական դպրոցը, որն ավարտել է 1921 թ. հոկտեմբերին և ապա եկել Հայաստան (տես ՀՊՊ Կաբինետ, գործ №11)։ Եզրակացությունը պարզ է։ Գվարդիայի գեներալ մայոր Ս. Կարապետյանը երբևիցե չի սովորել ոչ Մոսկվայի Ռազմական դպրոցում և ոչ էլ Կ. քաղաքի Հեծելազորային Ռազմական դպրոցում, այլ՝ 1925 թվին մեկ տարի սովորել է Լ. քաղաքի Բարձրագույն Հեծելազորային դպրոցում (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 61), իսկ հետագայում 1931—1934 թ. թ. սովորել և ավարտել է Մոսկվայի Ֆրունզեի անվան Ակադեմիան։

Հեղինակը նույն էջում գրում է. «... Նա իր դիվիզիայով կռվում էր Վորոնեժի ռազմաճակատում... արյունահեղ մարտեր է մղել Օստրովո և Տարտու քաղաքների համար, ապա և մտել Արևելյան Պրուսիա»։ Ճիշտ է, որ գվարդիայի գեներալ մայոր Սերգեյ Կարապետյանը հերոսական մարտեր է մղել Օստրովո, Տարտու, Ռիգա, Նիվել, Վելիկոլուգի համար և ապա 1945 թ. մայիսին մասնակցել է Բեռլինի համար մղվող մարտերին, բայց նա Արևելյան Պրուսիայում չի եղել։

Այնուհետև՝ 82-րդ էջում կարդում ենք. «Սովետական Միության Հերոս Ռուբեն Բաղիրովը ծնվել է 1908 թվին Շուշի քաղաքում, 7-ամյա կրթություն ստացել է տեղի հայկական դպրոցում, իսկ միջնակարգ կրթություն Թուրքմենստանում, այստեղ նա ընդունվում է Լենինի—Ստալինի պարտիայի շարքերը։ 1940 թվականին Ռուբեն Բաղիրովը ավարտում է Կիզիլարվադի Ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտը, 1942 թվի աշնանը Բաղիրովն ավարտում է Աշխաբադի հետևակային դպրոցը և մեկնում ռազմաճակատ»։

Մինչդեռ Բաղիրովի ծնողները տեղափոխվել են ընտանիքով Թուրքմենստան, երբ դեռ Ռուբենը չէր ծնվել, ուրեմն նա Շուշի քաղաքում 7-ամյա կրթություն ստանալ չէր կարող. 7-ամյա կրթություն ստացել է Թուրքմենստանի Կիզիլարվադի Երկաթգծի դպրոցում, որն ավարտել է 1926 թվին (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 8), նույն տեղում այդ տարիներին նա պարտիայի մեջ չի անցել, այլ նա պարտիայի շարքերն է ընդունվել 1943 թվականին, երբ աշխատում էր որպես Թուրքմենստանի Բնակ. Կոմունալ շինարարության Ռեսպուբլիկական Կոմիտեի նախագահ(տես ՀՊՊ Կաբինետ, նրա անձնական գործը)։ Ընկ. Ռ. Բաղիրովը Կիզիլարվադի Ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտում սովորել չէր կարող, որովհետև այնտեղ այդպիսի ինստիտուտ չի եղել։ Ռուբեն Բաղիրովը 1943 թվի սեպտեմբերին գնում է բանակ, նրան ուղարկում են Ա. քաղաքի հետևակային դպրոցում սովորելու։ Ավարտելով դպրոցը, 1944 թ. մարտին մեկնում է ռազմաճակատ (և ոչ թե 1942 թ., ինչպես գրում է հեղինակը)։

Ալբոմի 45-րդ էջում կարդում ենք. «Սովետական Միության Հերոս Գեղեոն Միքայելյանը 9 տարեկան հասակից, ստիպված է լինում ապրել իր աշխատանքով։ Նա լինում է գառնարած, բատրակություն է անում, սովորում է կոշկակարի մոտ, պահակություն անում»։

Իրականում ընկ. Գ. Միքայելյանը եղել է կոշկակարի մոտ աշակերտ (ոչ թե գառնարած, բատրակ, պահակ), հետո՝ էլեկտրոկայանի շինարարության վրա բանվոր, իսկ 1924 թվին մտել է Երևանի Ռազմական դպրոցը սովորելու (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 43)։ Հեղինակը նույն էջում գրում է, որ «Թշնամուն հաջողվում է շրջապատել կապիտան Միքայելյանի զորամասը, բայց նա մեկ ու կես ամիս կարողանում է դիմադրել հակառակորդին, հսկայական զոհեր պատճառել նրան, վերջապես ճեղքելով օղակը, միանալ Կարմիր Բանակի զորքերին»։ Հայրենական Պատերազմի Պատմության Կաբինետում պահվում է անձամբ Սովետական Միության Հերոս Գ. Միքայելյանի պատմածի սղագրությունը, որից երևում է, որ այդ օղակը ճեղքել են մի շարք զորային միավորումներ, որոնց թվում իր ղեկավարած գունդը (և ոչ թե միայն նրա ղեկավարած գունդն է ճեղքել, ինչպես գրում է հեղինակը)։ Հեղինակը նույն էջում գրում է, որ զինվորական Ակադեմիան ավարտելուց հետո ընկ. Միքայելյանը ստանում է փոխգնդապետի կոչում և նորից մեկնում ռազմաճակատ։ Ընկ. Գ. Միքայելյանը 1942 թ. նոյեմբերին արդեն փոխգնդապետ էր, իսկ նա Ֆրունզեի անվան Ակադեմիան ավարտել է 1943 թ. օգոստոսի 1-ին։

Ընկ. Մալխասյանը գրում է. «Սովետական Միության Հերոս Գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Հովհաննիսյանը 1943 թվականի սկզբին կանչվում է բանակ, մեկնում է ռազմաճակատ և նույն թվին աչքի է ընկնում իր սխրագործություններով»։ Մինչդեռ Վլադիմիր Հովհաննիսյանը Սովետական Բանակում էր գտնվում դեռևս 1941 թվի օգոստոսի 20-ից (տես ՀՊՊ Կորինետ, գործ № 243), նա առաջին անգամ 1941 թ. սեպտեմբերի 5-ին վիրավորվում է

Էլնյա քաղաքի համար մղվող կռիվներում, բուժվելուց հետո կրկին մասնակցում է մարտերին և 1941 թվականի նոյեմբերի 10-ին Յարցեվո քաղաքի տակ մղված կռիվներում վիրավորվում է երկրորդ անգամ, իսկ 1943 թ. առաջադրվում է Սովետական Միության Հերոսի կոչման (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 243, նրա պարգևաթերթիկը)։

Հեղինակը 111 էջում գրում է. «Սովետական Բելոռուսիայի անտառներում և անանցանելի հովիտներում ցուցաբերած հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը բարձր գնահատելով անվեհեր գվարդիական ֆիրեյտոր Արամայիս Սարգսյանի սխրագործությունները, իր 1942 թ. հուլիսի 22-ի հրամանագրով նրան շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում»։ Մինչդեռ գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Ասատուրի Սարգսյանը Սովետական Միության Հերոսի կոչում է ստացել Գերագույն Սովետի 1944 թվականի հուլիսի 22-ի հրամանագրով (տես 23 հուլիսի, 1944 թ. «Իզվեստիա» թերթի հերոսների ցուցակի 103 համարը)։

Ալբոմի 57-րդ էջում կարդում ենք. «Սովետական Միության Հերոս Լ. Ս. Զափչախյանը... 1933 թվին ընդունվում է Համկ(բ)Պ շարքերը։ Սույն թվին էլ պարտադիր զինվորական ծառայության համար կանչվում է Սովետական Բանակ, ուր գտնվում է մինչև այժմ... ՍՍՌՄ Գերագույն Սովետը 1942 թ. դեկտեմբերի 21-ին նրան շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում»։

Սովետական Միության Հերոս Լազր Զափչախյանը 1937 թվին է ընդունվել Համկ(բ)Պ շարքերը։ Հեղինակին հայտնի չէ նույնիսկ այն փաստը, որ Զափչախյանը 1942 թ. ապրիլի 18-ին զոհվել է պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 202)։ Զափչախյանի զորային միավորումը նրան առաջադրել է հետմահյա կոչման (տես նրա պարգևաթերթիկը)։

ՍՍՌՄ Գերագույն Սովետը Զափչախյանին Սովետական Միության Հերոսի կոչում է շնորհել ոչ թե 1942 թ. դեկտեմբերի 21-ին (տես ալբոմի 57-րդ էջը), այլ 1942 թ. հուլիսի 21-ին (տես նրա անձնական գործում Գերագույն Սովետի հրամանագիրը)։ Հեղինակին հայտնի չեն նաև Զափչախյանի սխրագործությունները, այն, որ Զափչախյանի ղեկավարած Լսկադրիլիան կատարել է 1800 մարտական թռիչք և ցած է գցել 60-ից ավելի գերմանական ինքնաթիռ, որի համար նախքան հերոսի կոչում ստանալը, Զափչախյանը պարգևատրվել է Լենինի և Կարմիր Աստղի շքանշաններով։

Ընկ. Մալխասյանի ալբոմի 85-րդ էջում նշվում է, որ «Սովետական Միության Հերոս, գվարդիայի լեյտենանտ Աշոտ Ավետիսի Ամատունին ծնվել է 1923 թվին Լենինականում... սովորում և ավարտում է Լենինականի Մանկավարժական ինստիտուտը, Հայրենական պատերազմն սկսելուն պես նա մեկնում է Սովետական Բանակ, սովորում և ավարտում է տանկային դպրոցը»։ Մինչդեռ Աշոտ Հաբեթի (ոչ Ավետիսի) Ամատունին բանակ է գնացել կամավոր, 1942 թ. փետրվարին, Լենինականի երկամյա Մանկ. ինստիտուտի 2-րդ կուրսից։ Նա սովորել ու ավարտել է Հետևակային ուսումնարանը, ապա մեկնել է ֆրոնտ, Ստալինգրադի մոտ վիրավորվել է, առողջանալուց հետո գնացել է սովորելու տանկային դպրոցում, որն ավարտել է 1943 թ. նոյեմբերին, ստացել կրտսեր լեյտենանտի կոչում, մասնակցել է Ուկրաինայի ազատագրմանը և Բեռլինի համար մղվող մարտերին։

Ալբոմի 88-րդ էջում հայտնվում է, որ Սովետական Միության Հերոս գվարդիայի կրտսեր լեյտենանտ Աշոտ Մինասի Ասրյանը ծնվել է 1922 թ. Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր գյուղում. 1941 թ. կանչվում է Սովետական Բանակ։ Մինչդեռ Ասրյանը ծնվել է 1920 թ. մարտի 3-ին Թբիլիսի քաղաքում (ոչ Վարդաբլուրում)։ Նրա հոր անունը ոչ թե Միայի է, այլ Մինաս է։ Նա բանակ է գնացել ոչ թե 1941 թվին, այլ 1940 թվին և մասնակցել է պատերազմին՝ սկզբից մինչև վերջ։

Ընկ. Մալխասյանը ալբոմի 3-րդ էջում բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լևոն Օրբելու մասին գրում է. «... 1925 թվին Ռազմա-բժշկական Ինստիտուտի ֆիզիոլոգիական ամբիոնի վարիչ, որ ղեկավարում է մինչև այսօր... Նա բիոլոգիական բաժնի ակադեմիկոս քարտուղարն է, իսկ 1942 թվին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի առաջին վիցե-պրեզիդենտ»։ Հեղինակը շարունակում է. «Որպես ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ և նույն Ակադեմիայի ֆիզիոլոգիական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար... զարգացրել է բացառիկ լայն կոորդինացնող գործունեություն...»։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի 1946 թվի հրատարակությամբ լույս տեսած «Լևոն Աբգարի Օրբելի» փոքրիկ բրոշյուրում գրված է. «Լևոն Աբգարի Օրբելին 1925—1946 թ. թ. եղել է Ս. Մ. Կիրովի անվան Ռազմա-բժշկական Ակադեմիայի (ոչ ինստիտուտի, ինչպես գրում է հեղինակը) ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ և պրոֆեսոր (տես գրքի 4-րդ էջը)։ Իսկ «1939—1946 թ. թ. ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Բիոլոգիական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար» (ոչ մինչև այժմ, ինչպես գրում է

հեղինակը)։ Հեղինակն այնքան անփութություն է ցուցաբերում, որ չհիշելով իր վերը գրած բառերը, Ակադեմիան դարձնում է ինստիտուտ, Բիոլոգիական բաժանմունքը՝ ֆիզիոլոգիական բաժանմունք, իսկ Բիոլոգիական բաժանմունքը դարձնում է բաժին և այլն։

Ընկ. Մալխասյանը Սովետական Միության Հերոս Սիմոն Բաղդասարյանի մասին գրում է (տես էջ 71), որ նա «1938 թ. ավարտում է Թբիլիսիի Օրջոնիկիձեի անվան ռազմական դպրոցը և ստանում կրտսեր լեյտենանտի կոչում... Իսկ Կերչ քաղաքի ազատագրման ժամանակ հանդես բերած բացառիկ խիզախության համար՝ Կարմիր Դրոշի շքանշան է ստանում...»։

Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի Հայրենական Պատերազմի Պատմության Կաբինետում պահվող պաշտոնական փաստաթղթի համաձայն պարզվում է, որ Սովետական Միության Հերոս Ս. Բաղդասարյանը ռազմական դպրոց չի ավարտել և կրտսեր լեյտենանտի կոչում այդ տարիներին չի ստացել, այլ նա կրտսեր լեյտենանտի կոչում է ստացել 1940 թ. Քութայիսում, երբ կուրսերում սովորում էր (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 160), Կերչի ազատագրման ժամանակ նա Կարմիր Դրոշի շքանշան չի ստացել և այժմ էլ չունի։

Սովետական Միության Հերոս Իվան Շահումյանի (տես՝ ալբոմի 94-րդ էջը) մասին գրված կենսագրականը նույնպես Ճղավաղված է։ Ընկ. Ի. Շահումյանը ոչ թե ավագ սերժանտ է, ինչպես գրում է հեղինակը, այլ փոխ-գնդապետ, ոչ թե 1914 թվի ծնված, այլ 1913 թվի, պարտիայի անդամ է ոչ թե 1940 թվից, այլ 1941 թվից։ Նա բանակ է գնացել 1941 թ. սեպտեմբեր ամսին և մասնակցել է Ելնիի կռիվներին (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 276)։

Կենսագրական փաստերի, վայրերի, զինվորական կոչումների և այլ տիպի բազմաթիվ սխալներ կան ալբոմի շատ էջերում, մասնավորապես 47, 54, 71, 72, 73, 87, 94, 95, 102, 104, 105, 113, 116 էջերում։

Երբեմն մոռացության են տրված մարդկանց ստացած շքանշանները, երբեմն էլ նրանց վերագրում է այնպիսի շքանշաններ, որ նրանք չեն ստացել։ Օրինակ, գեներալ մայոր Բ. Հ. Գալբստյանը (տես 23-րդ էջը) ստացել է Լենինի շքանշան և Սովետական Բանակում 20-ամյա ծառայության մեդալ, մասնակցել է սովետա-ֆիննական կռվին, բայց հեղինակը չի նշում։ Գեներալ Մայոր Հ. Հ. Մարտիրոսյանը (տես 26-րդ էջը) Մոսկվայի պաշտպաններից է. հեղինակն այդ մասին ոչինչ չի հիշատակում։ Նա ունի ոչ թե երկու, այլ երեք մարտական Կարմիր Դրոշի շքանշան և Սովետական Բանակում 20-ամյա ծառայության մեդալ, որոնց մասին հեղինակը ոչինչ չի գրում։

Հրետանու գեներալ մայոր Գ. Չայլախյանը, բացի հեղինակի թվարկած շքանշաններից, ունի նաև ԲԴԿԲ 20-ամյա ծառայության մեդալ։ Սրանց հակառակ՝ հեղինակը Սովետական Միության Հերոս Սիմոն Բաղդասարյանի մասին գրում է (տես էջ 71), որ նա պարգևատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով, բայց նա այդպիսի շքանշան չի ստացել։

Սովետական Միության Հերոս Աղվան Բաբայանը ստացել է Բոգդան Խմելնիցկու շքանշան (տես 104-րդ էջը), մինչդեռ Հայրենական Պատերազմի Պատմության Կաբինետում եղած Բաբայանի անձամբ հաղորդածի սղագրության մեջ նա ցույց է տվել (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 341) մի շարք շքանշաններ, բայց ոչ Բոգդան Խմելնիցկու անվան շքանշան։

Շատ դեպքերում ճիշտ չեն տրված նաև Գերագույն Սովետի հրամանագրերի տարեթվերն ու ամսաթվերը։

Ալբոմի 108-րդ էջում Սովետական Միության Հերոս Աշխարհբեկ Ղազարյանի մասին հայտնվում է, որ նա Սովետական Միության Հերոսի կոչում ստացավ 1945 թվի փետրվարի 21-ին, մինչդեռ նա հերոսի կոչման է արժանացել Գերագույն Սովետի փետրվարի 27-ի հրամանագրով (տես 1945 թ. մարտի 3-ի «Իզվեստիա» № 52, հերոսների ցուցակի 113-րդ համարը)։

Ըստ ալբոմի՝ Արամայիս Սարգսյանը Սովետական Միության Հերոսի կոչում է ստացել 1942 թ. հուլիսի 22-ին, այնինչ նա հերոսի կոչում է ստացել 1944 թ. հուլիսի 22-ին (տես ՀՊՊ Կաբինետ, նրա անձնական գործը)։

Ալբոմի 81-րդ էջում հաղորդվում է, որ Սովետական Միության Հերոսի կոչում է ստացել Սերգեյ Սարխոշևը 1941 թ. նոյեմբերի 5-ին, մինչդեռ նա հերոսի կոչման արժանացել է 1944 թ. փետրվարի 22-ի հրամանագրով (տես 24/2 «Իզվեստիա» № 46, 1944 թ.)։

Ըստ ալբոմի տվյալների՝ Սուրեն Սարգսյանը Սովետական Միության Հերոսի կոչում է ստացել 1948 թ. մարտի 27-ին, մինչդեռ նա հերոսի կոչման է արժանացել 1945 թ. մարտի 24-ի հրամանագրով։

Նույնանման սխալներ կան մասնավորապես 79-րդ, 53-րդ, 67-րդ, 70-րդ, 87-րդ, 107-րդ էջերում։ Տարօրինակ է, թե ինչու հեղինակը ոչ մի խոսք չի ասել Սովետական Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյանի, հերոսներ Մագոյանի, Չափչախյանի և մյուսների շքանշանների մասին, մի բան, որ շատ անհրաժեշտ էր։

Ալբոմը զերծ չէ նաև ավելորդաբանություններից։ Ալբոմի 96-րդ էջում, խոսելով Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Սուրեն Սմբատի Առաքելյանի մասին, ընկ. Մալխասյանը մի շարք անհիմն ու մտացածին փաստեր է բերում։

Մինչդեռ մեզ հայտնի է, որ Կուրբատսկայայի բնակավայրում Առաքելյանը արհամարհելով մահը, նետվեց թշնամու կրակակետի վրա. մի քանի րոպեից հետո վաշտը արդեն բարձունքի գագաթին էր։ Եվ նրա տարած Կարմիր Դրոշը ծածանվում էր բարձունքի վրա (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 75)։

Սովետական Միության Հերոս ավագ սերժանտ Արամայիս Պողոսյանի մասին 95-րդ էջում ասված է. «Երբ սկսվեց Հայրենական Պատերազմը, Պողոսյանը գտնվում էր Արևմտյան Ուկրաինայում։ Թշնամու առաջին ծանր հարվածները ընդունողներից մեկը եղավ ավագ սերժանտ Պողոսյանը։ Իր ստորաբաժանման մարտիկների հետ նա համառ մարտեր է մղում հարձակվող հրոսակախմբերի դեմ, հյուծելով թշնամուն։ Արամայիս Պողոսյանը մարտական փառքով պսակեց իրեն Ստալինգրադի համար մղված կռիվներում»։ Հեղինակը փոխանակ ընդհանուր, սովորական գնահատականներ տալու, կարող էր գրել իրականը և էականը, որ Պողոսյանը Սովետական Միության Հերոսի կոչման է արժանացել 1943 թ. սեպտեմբերի 29-ի Դարնիվկայի ռայոնում Դնեպրը անցնելու համար, վիրավոր վիճակում նա երկու անգամ կապում է իր վերքերը և շարքից դուրս չի գալիս (տես ՀՊՊ Կաբինետ, գործ № 242)։ Նույն տիպի սխալներ կան նաև Սովետական Միության Հերոս, լեյտենանտ Ղազարոս Ավագյանի մասին գրված բաժնում։

Ալբոմում կան բավական լեզվական, ոճական սխալներ, որոնց կողքով անուշադիր է անցել ալբոմի խմբագիրը։

Մի քանի խոսք նկարչական ձևավորման մասին։ Ալբոմի նկարչական ձևավորումը կատարել են նկարիչներ Ս. Արուտչյանը և Ա. Շաքարյանը։ Ալբոմում զետեղված գեներալների և Սովետական Միության հերոսների լուսանկարների ընտրությունը կատարվել է միանգամայն պատահական, իսկ նկարիչներն էլ չափից դուրս անփույթ են ձևավորել, որի հետևանքով ստացվել է այն, որ պորտրեների մեծ մասը չեն տեղավորված շրջանակների կենտրոնում (տես 64, 66, 69, 84, 92, 95, և այլ էջերը)։ Շրջանակները հավասարապես չեն կտրված, պորտրեները դուրս են մնացել շրջանակներից։ Լուսանկարների մեծ մասը (տես 11, 22, 39, 70, 76, 93, 109 և այլ էջերը) արտահայտիչ չեն։

Ալբոմի համարյա բոլոր էջերը լցված են միատեսակ շաբլոն, դիտողի համար անհետաքրքիր օրնամենտով։

Գեներալները, Սովետական Միության Հերոսները, սպաները, մարտիկները, նույնիսկ զոհվածները բոլորը միատեսակ ձևավորման շրջանակի մեջ են գտնվում։ Շատ հետաքրքիր կլիներ, եթե մեր ձևավորող նկարիչները ձևավորեին ոչ թե շաբլոն, միապաղաղ, անհետաքրքիր շրջանակի մեջ, յուրաքանչյուրին՝ ըստ իրենց զինվորական մասնագիտության (օդաչու, տանկիստ, հրետանավոր, բժիշկ, կապավոր և այլն)։

Միանգամայն աններելի է, որ այսպիսի շատ կարևոր մի աշխատանք կատարված է այդքան անփույթ կերպով։ Հայ գեներալների ու հերոսների կյանքին ու մարտական գործողություններին նվիրված ալբոմը պետք է որ լույս տեսնել շատ ավելի լուրջ ու բարեխիղճ կատարմամբ և խմբագրմամբ։

Կ. ԿՈՉՄՈՅԱՆ